Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

1798 փետրվար 26 Պավել Ի-ի հրովարտակը հայերի մասին:
1799 հունվար 30 Կ. Պոլսում ծնվեց Մխիթարյան միաբանության հիմնադիրներից և սյուներից մեկը՝ Էդուարդ Հյուրմուզյանը: (Վախճ. Հռոմում 1876թ-ին):
1800 հունվար 12 Թուրք-ֆրանսիական պայմանագիր, Եգիպտոսը վերադարձվում է Թուրքիային:
1801 հունվար 18 Պավել Ի-ի հրովարտակը Վրաստանը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ:
հունվար 20 Անգլո-պարսկական պայմանագիրը ընդդեմ Ֆրանսիայի և Ռուսաստանի:
մարտ 9 Հ. Արղությանը վախճանվում է Թիֆլիսում:
սեպտեմբեր 12 Ալեքսանդր Ի-ի մանիֆեստով Արևելյան Վրաստանը միացվում է Ռուսաստանին: Վրաստանի հետ Ռուսաստանին են միացվում Լոռի, Փամբակ, Ղազախ, Բորչալու գավառները:
1802 փետրվար 26 Թիֆլիսում ծնվեց պատմաբան, հրապարախոս և բանաստեղծ Գաբրիել Պատկանյանը: (Վախճ. 1889թ.-ին, Պետերբուրգում):
սեպտեմբեր 26 Թիֆլիսում բացվում է ռուսական Ազնվականական ուսումնարանը՝ ազնվական ծագում ունեցող վրացի և հայ երեխաների համար:
դեկտեմբեր 14 Կեսարիայում ծնվեց մանկավարժ Հակոբ Մանվելյանը: (Վախճ. 1870թ.-ին):
1803 հունվար 3 Ջորագյուղում (Երևանի գավառ) ծնվեց գրող, մանկավարժ և հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը: (Վախճ. 1858թ.-ին, Պարսկաստանի Շիրազ քաղաքում):
1804 հունվար 3 Ռուսական զորքերը գրավում են Գյանջան, որը վերանվանվում է Ելիսավետպոլ: Գյանջայի խանության հետ Ռուսաստանին են միացվում Շամշադինն ու Բասարգեչարը:
փետրվար 1 Սկսվում է թուրքական բռնապետության դեմ ուղղված սերբերի ազգային-ազատագրական պայքարը:
մայիս 1 Ռուսական զորքերի Երևանյան առաջին արշավանքը՝ զորավար Պ. Ցիցիանովի հրամանատարությամբ:
մայիս 10 Երևանի Մամադ խանը, տեղեկանալով ռուսների առաջխաղացման մասին, կարգադրում է խանության հայ բնակչությունից շուրջ 20000 հոգի բռնագաղթեցնել Կարսի փաշայություն և այնտեղ պահել մինչև պատերազմի ավարտը:
հունիս 10 Ռուսական զորքերը Գյումրու մերձակայքում պարտության են մատնում Աբաս Միրզայի զորքերին և ազատելով Կարս քշվող հայերի՝ բնակեցնում են Փամբակում ու Թիֆլիսում:
հուլիս 2 5000 զինվորից բաղկացած ռուսական զորքը պաշարում է Երևանը:
սեպտեմբեր 3 Ռուսական զորքերը վերացնում են Երևանի բերդի պաշարումը և վերադառնում Վրաստան:
1805 մարտ 30 Շորագյալի սուլթանության (Արևելյան Շիրակ) կենտրոն Արթիկի գրավումը ռուսական զորքերի կողմից:
մայիս 14 Քյուրակ-չայ գետի ափին կնքվում է պայմանագիր, որի համաձայն Ղարաբաղը միացվում է Ռուսաստանին:
մայիս 21 Ռուսաստանին է միացվում Շաքու (Նուխիի) խանությունը:
1805 հոկտեմբեր 30 Շորագյալի սուլթանությունն ընդունում է ռուսական հպատակություն:
դեկտեմբեր 25 Ռուսաստանի կազմի մեջ է մտնում Շիրվանի (Շամախու) խանությունը:
1806 հունվար 22 Ռուսական բանակը գրավում է Դերբենդը:
փետրվար 8 Բաքվում դավադրաբար սպանվում է գեներալ Ցիցիանովը:
ապրիլ 11 Խասգյուղում (Կ. Պոլիս) ծնվեց գրական-հասարակական գործիչ, մանկավարժ Ռուբեն Փափազյանը: (Վախճ. 1857թ.-ին, Զմյուռնիայում):
դեկտեմբեր 18 Սկսվում է ռուս-թուրքական պատերազմը:
1807 մայիս 4 Կնքվում է Ֆինկենշտեյնի պայմանագիրը Ֆրանսիայի և Պարսկաստանի միջև, որն ուղղված էր Ռուսաստանի և Անգլիայի դեմ:
մայիս 30 Թուրքական սերասքյար Յուսուֆ-զիա փաշան 10 հազար զինվորներով հարձակվում է Գյումրու վրա:
հունիս 18 Գեներալ Գուդովիչի գլխավորած ռուսական զորքերը Ախուրյանի ափին պարտության են մատնում թուրքական բանակին:
հուլիս 8 Կնքվում է Տիլզիտի հաշտությունը Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև:
1808 սեպտեմբեր 26 Ռուսական զորքերի Երևանյան երկրորդ արշավանքը:
հոկտեմբեր 10 Թուրքական մեծ սադրազամ Յուսուֆ փաշան հրապարակում է այլադավան հպատակների քաղաքական իրավունքները սահմանափակող մի հրամանագիր:
նոյեմբեր 1 Գեներալ-մայոր Նեբոլսինը գրավում է Նախիջևանը:
նոյեմբեր 30 Վերացվում է Երևանի բերդի պաշարումը:
դեկտեմբեր 20 Զմյուռնիայում ծնվեց բանասեր, կղերա-աղայական հոսանքի ներկայացուցիչ Մսեր Մսերյանցը: (Վախճ. 1873 թ.-ին, Մոսկվայում):
1809 հունվար 17 Դարդանելում կնքվում է անգլո-թուրքական պայմանագիր. ավարտվում է անգլո-թուրքական 1807-1809 թթ. պատերազմը:
մարտ 13 Անգլո-պարսկական նախնական պայմանագրի կնքումը, որով Անգլիան խոստանում էր օգնել Պարսկաստանին ռուս-պարսկական
օգոստոս 2 Կալկաթայում վախճանվեց հայ ազատագրական շարժման աչքի ընկնող ղեկավարներից մեկը՝ Հովսեփ Էմինը: (Ծնվ. 1726թ.-ին, Պարսկաստանի Համադան քաղաքում):
հոկտեմբեր 15 Քանաքեռում ծնվեց հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: Անհետացավ 1848թ.-ին ապրիլի 2-ին:
1810 փետրվար 15 Փարիզի Արևելյան լեզուների

դպրոցում հիմնադրվում է հայոց լեզվի ամբիոն՝ Հակոբ Շահան Զրպետյանի ղեկավարությամբ:

մայիս 10 Թեոդոսիայում ծնվեց Գաբրիել Այվազովսկին: (Վախճ. 1880թ.-ին, Թիֆլիսում):

դեկտեմբեր 8 Ռուսական զորքերը գրավում են Ախալքալաքը:

1811 փետրվար 17 Հիմնվում է Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, որը իր գործունեությունը շարունակում է առ այսօր:

1812 մայիս 14 Թիֆլիսում ծնվեց «Հյուսիսափայլ» ամսագրի հիմնադիր, անվանի հրապարակախոս և լուսավորիչ Ստեփանոս Նազարյանը: (Ծնվ. 1812թ.-ին):

մայիս 16 Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվում է Բուխարեստի հաշտության պայմանագիրը: Ռուսաստանին է միացվում Բեսարաբիան:

(Շարունակելի)

Լուրեր Իրանահայ համայնք

Հայ գեղանկարչի ցուցահանդեսը՝ Քլարա Աբգարի թանգարանում

Մայիսի 18-ին Թանգարանի համաշխարհային օրվա եւ Քլարա Աբգարի թանգարանի կյանքի կոչվելու 10-րդ տարվա հետ միաժամանակ, նույն թանգարանում տեղի ունեցավ նկարչական ցուցահանդես՝ Ծաղիկ Հովսեփյանի գործերից: Ծաղիկ Հովսեփյանը հետեւում է ռեալիզմ ու կլասիկ ոճերին եւ ցայսօր ստեղծել է 300 գործեր, որոնք պարունակում են կրոնական թեմաներ, դիմանկարներ եւ բնապատկերներ:

Իրան

Վլադիմիր Պուտինը գոհունակություն է հայտնել ռուս-իրանական համագործակցության առթիվ

ՄՈՍԿՎԱ, 17 ՄԱՅԻՍԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Իրանը համարել է Ռուսաստանի վաղեմի եւ կայուն գործընկերը: «Իրանը մեր վաղեմի եւ կայուն գործընկերն է»,-հայտարարել է ՌԴ նախագահը Իրանի արտաքին գործերի նախարար Քամալ Խարազիի հետ կայացած հանդիպմանը:

Հայաստան

Հայաստանի պետական բուհերում սփյուռքահայ դիմորդներին հատկացվել է 70 տեղ

ԵՐԵՎԱՆ, 18 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ (թղթ. Մարիա Ասատրյան): Հայաստանի պետական բուհերում սփյուռքահայ դիմորդներին ՀՀ կառավարության որոշմամբ 2004-2005 ուստարում պետպատվերի շրջանակներում հատկացվել է 70 տեղ:

Կրթության եւ գիտության նախարարության ափյուռքի բաժնի տեղեկատվությամբ, պետպատվերի շրջանակներում տեղեր են հատկացվել մանկավարժություն, հայագիտություն եւ արվեստի մասնագիտությունների գծով, եւ հիմնականում բախշվում են Հայաստանի պետական մանկավարժական, Երեւանի պետական համալսարանների, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի եւ Գեղարվեստի ակադեմիայի միջեւ:

ԱՄՆ-ը Հայաստանին կտրամադրի 94 մլն դոլար

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - ԱՄՆ կառավարությունն այս տարի նախատեսում է Հայաստանին տրամադրել 94 մլն դոլար: Ինչպես նշել է Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան աշխատանքային խմբի համանախագահ Կառլոս Պասկուալը, 35 մլն դոլարը կուղղվի տնտեսության զարգացմանը եւ նոր աշխատատեղերի ստեղծմանը, 15 մլն դոլարը՝ սոցիալական ոլորտի ծրագրերին, եւս 15-մլն դոլարը՝ անվտանգության եւ իրավապահ մարմինների գործունեության ծրագրերի իրականացմանը: Շուրջ 10 մլն դոլար նախատեսված է ժողովրդավարության աջակցության, 8.5 մլն դոլարը՝ փոխանակման ծրագրերի համար:

Ըստ «Արմենպրեսի»՝ Պասկուալը նշել է նաեւ, որ, ի լրումն այս օժանդակության, Հայաստանին այսուհետ աջակցություն կցուցաբերվի նաեւ «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի ծրագրերի շրջանակներում:

Ոչ թե հայերի ցեղասպանություն, այլ «աքսոր» է տեղի ունեցել

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Թուրքիայի պատմության ինստիտուտը Անգլիայի, Գերմանիայի, Օսմանյան Թուրքիայի եւ միսիոներական արխիվներում վերջին երկու տարիներին կատարած «ուսումնասիրությունների» հիման վրա «Աքսոր եւ արտագաղթ» անվանմամբ մի գիրք է հրատարակել, որտեղ «մաթեմատիկական ճշգրտությամբ բացահայտել է 1915 թ.-ից առաջ եւ հետո Թուրքիայում եղած հայերի թիվը»:

«Անատոլու» գործակալությունը հայտնել է, որ գրքում ասվում է, թե արեւմտյան գիտնականների պատմական «մեծաթիվ աշխատություններում» նշվում է, որ Օսմանյան Թուրքիայում 1914 թ.-ին բնակվել է մոտավորապես 1,5 մլն հայ, իսկ ըստ ամերիկացի հետազոտող Դեվիդ Մեգիի՝ 1918 թ.-ին նրանց թիվն այդ երկրում կազմել է 1 մլն 479 հազար: Հենվելով հիմնականում գերմանական արխիվներում առկա տեղեկությունների վրա՝ թուրք պատմաբանների խումբը այդ գրքում «եզրակացնում» է, որ «անհիմն է պնդել», թե, ներառյալ 1914 թ.-ից առաջ տեղի ունեցած իրադարձությունները, Առաջին համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ 1,5 մլն հայ է սպանվել Օսմանյան Թուրքիայում: Գրքում ասվում է, որ 1915 թ.-ին, հատկապես Արեւելյան եւ Ներքին Անատոլիայում բնակվող հայերը, «բացառությամբ որոշ արտառոց դեպքերի», իրենց բնակության վայրերից աքսորվել են Սիրիայի եւ Հյուսիսային Իրաքի տարածաշրջաններ, որի ընթացքում նրանց մի մասը՝ «անգամ հարյուր հազարի չհասնող», մահացել է հիվանդություններից եւ քաղցից: Ըստ գրքի՝ աքսորվածների թիվը մոտավորապես 500 հազար է եղել: Նրանց «մեծամասնությունը», սկսած 1918 թ.-ից, «վերադարձել» է նախկին բնակության վայրերը:

Հայոց Սփյուռք

Սաակաշվիլին կարեւորում է Վրաստանի հայաբնակ շրջանների ճանապարհների նորոգումը

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին մայիսի 19-ին հանդիպում է ունեցել խորհրդարանի «Ազգային շարժում-ժողովրդավարներ» խմբակցության հետ, հայտնում է Ա-ԻՆՖՈ-ն:

Հանդիպման ընթացքում նախագահը հայտնել է, որ շուտով միջազգային մի շարք դոնոր կազմակերպություններ Վրաստանին տրամադրելու են 300-350 միլիոն ԱՄՆ դոլարի օգնություն:

Խմբակցության հայազգի անդամ Վան Բայբուրդյանը հավաստիացնում է, որ, ըստ նախագահի, այդ գումարից մոտ 80-100 միլիոնը տրամադրվելու է Ախալցխա-Ախալքալաք, Նինոծմինդա-Ծալկա-Թբիլիսի ճանապարհների վերանորոգմանը:

Նախագահն իր խոսքում նշել է, որ Վրաստանի հարավային հայաբնակ շրջանների Թբիլիսիից մեկուսանալու պատճառներից մեկն էլ բարվոք ճանապարհների պակասն է:

Միջազգային

ԱՄՆ-ը մտադիր է Ռուսաստանի հետ շարունակել երկխոսությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ

ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգության հարցերով օգնական Կոնդոլիզա Ռայսը ծրագրում է առաջիկա շաբաթ օրը Մոսկվայում, ի թիվս տարածաշրջանային այլ հարցերի, քննարկել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները:

Նա այդ մասին հայտնել է իր ուղեւորության նախօրեին կայացած ճեպազրույցի ժամանակ: «Մենք Ռուսաստանի հետ ջանում ենք կարգավորել մի ամբողջ շարք կոնֆլիկտային իրավիճակներ,- նշել է ԱՄՆ նախագահի օգնականը:

- Կարծում եմ՝ մենք բոլորս փոքր-ինչ հուսախաբված ենք, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերմամբ այդ անել դեռեւս չի հաջողվել»:

«Մենք կցանկանայինք, որ Ադրբեջանի եւ Հայաստանի կառավարությունները վերստին լրջորեն զբաղվեին Լեռնային Ղարաբաղի խնդրով»,- ասել է Ռայսը: Նրա կարծիքով, հակամարտությունը, որը «բացասաբար է ազդում թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի վրա նրանց տնտեսական ու քաղաքական զարգացման առումով», արդեն «չափազանց երկար է ձգձգվում»:

ԱՄՆ-ը Ռուսաստանի հետ քննարկում է նաեւ Կովկասի տարածաշրջանի մյուս գործընթացները: «Վրաստանում, ըստ իս, մենք վերջերս լավ արդյունք ունեցանք. Վրաստանի նոր կառավարությունը կարգավորեց հակամարտությունն Աջարիայի հետ»,- ասել է Կոնդոլիզա Ռայսը:

Իլհամ Ալիեւը կարեւորում է ԵՄ-ի դերը ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը կոչ է արել Եվրամիությանը ներգրավվել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում:

«ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը կարեւոր ավանդ է ներդնում այդ հիմնախնդրի լուծման մեջ, բայց մենք այն կարծիքին ենք, որ կոնկրետ արդյունքների հասնելու համար օգտակար կլիներ այդ գործընթացում Եվրամիության, Եվրախորհրդի, եվրոպական ամբողջ հասարակական կարծիքի ներգրավումը»,- ասել է նա այսօր կայացած ճեպազրույցի ժամանակ, որը նվիրված էր Եվրահանձնաժողովի ղեկավար Ռոմանո Պրոդիի հետ կայացած բանակցությունների արդյունքներին:

Ինչպես տեղեկացնում է «Արմենպրեսը», Եվրամիության գլխավոր գործադիր մարմնի նախագահն իր հերթին պատրաստակամություն է հայտնել ներգրավվել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում՝ ընդգծելով, որ Եվրամիությունը «խիստ անհանգստացած է այդ տարածաշրջանում խաղաղության բացակայությունից»:

«Մենք պատրաստ ենք օժանդակել կարգավորման գործընթացին եւ հանդես գալ կոնկրետ առաջարկներով»,- ասել է նա: Միաժամանակ Պրոդին հայտնել է, որ Եվրամիությունը պատրաստ է ընդլայնված Եվրամիության «բարեկամների ու հարեւանների» ռազմավարության շրջանակներում խորացնել տնտեսական համագործակցությունն Ադրբեջանի հետ:

Ալիեւը «խաղաղ երկխոսությունը շարունակելու համար կարեւոր» է համարել Ադրբեջանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարների վերջերս կայացած հանդիպումը: «Բայց մենք չենք ցանկանում բանակցություններ հանուն բանակցությունների, չենք ցանկանում դրանց նմանակում»,- ընդգծել է Ալիեւը:

«Մենք հանդես ենք գալիս հայկական կողմի հետ նոր թեմաների ու խնդիրների առարկայական քննարկման օգտին, որոնք կարող են կոնկրետ արդյունք տալ միջազգային իրավունքի եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա

հակամարտության լուծման գործում»,- ավելացրել է Ադրբեջանի նախագահը:

Հասարակական

ՄԵՆՔ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆՔ...

Այնպես է ստացվում, որ ժամանակ առ ժամանակ ստիպված անդրադարձ է լինում Ամենայն հայոց Սուրբ աթոռ էջմիածնի եւ Անթիլիասի հարաբերություններին: Հարաբերություններ, որ վերջինիս մեղքով նման են թավշյա ծածկոցի տակ թաքցրած ռումբի: Ինչո՞ւ վերջինիս: Օրերս մամուլից հայտնի դարձավ, որ Կիլիկյան աթոռի գահակալ Արամ Ակն հերթական (այս էլ որերորդ անգամ) ոտնձգությունն է կատարել Մայր աթոռ Սուրբ էջմիածնի նկատմամբ՝ Կանադայում ձեւավորելով նոր թեմ, անտեսելով եւ արհամարհելով այն իրողությունը, որ Կանադայում արդեն գոյություն ուներ թեմ՝ ստեղծված Մայր աթոռի կողմից: Թշնամական արարք է սա՝ ուղղված Սուրբ էջմիածնի դեմ, ասել է թե՝ ողջ հայության մայր հայրենիքի դեմ:

Սկսած 1950ական թթ. կեսերից, Անթիլիասի ղեկավարներն ագրեսիվ գործողություններ ձեռնարկեցին Մայր աթոռի դեմ՝ զավթելով Ս. էջմիածնին պատկանող թեմեր սփյուռքում: Ակամա հարց է առաջանում՝ ի՞նչ անուն տալ դրան: Անթիլիասը իրեն հովանավորող Դաշնակցություն կուսակցության առաջնորդությամբ եւ խրախուսանքով գողացավ, զավթեց Թեհրանի, Ատրպատականի, Սպահանի թեմերը, պառակտեց Հունաստանի, Մ. Նահանգների թեմերը, խցկվեց Ֆրանսիա: Սովետական ժամանակներում Անթիլիասն իր շահամոլությունը թաքցնում էր քաղաքական աստառի տակ: Եվ դա այն ժամանակներում, երբ արդեն չկար Ստալինը, երբ սառույցը շարժվել էր եւ հայրենիքևսփյուռք հարաբերությունները ջերմացել էին, ինչպես իրար հանդիպած կարոտյալ եղբայրներ: Սա, իհարկե, Դաշնակցություն կուսակցության հերթական քաղաքական սխալն էր Սուրբ էջմիածնի եւ մայր հայրենիքի նկատմամբ:

Այժմ ինչո՞վ են Անթիլիասի ղեկավարներն արդարանում՝ կեղծ բարեպաշտական կարգախոսներով ու դեմագոգիայով: Արամ Ակն եւ մանավանդ նրա հովանավոր կուսակցությունը սիրում են վերամբարձ ելույթներ. «արդարամտությո՛ւն...», «հայրենիքի սե՛ր...», «մեկ ազգ, մեկ եկեղեցի...», «միասնական...»: Համաձայնեք. այդ խոսքերը փուչ են... իսկ իրողությունը շահամոլության եւ խարդավանքի այն ահավոր մոլուցքն է, որ վերջին տասնամյակներում բնորոշ է եղել Անթիլիասին եւ որի սուր ծայրն ահա 50 տարի ուղղված է Մայր աթոռ Սուրբ էջմիածնի դեմ: Քանի անգամ կարելի է կրկնել. մեկ եկեղեցին երկու գագաթ չի ունենում: Բուրգը, պետությունը, ընտանիքը, ցանկացած նորմալ կառույց ունենում են մեկ ղեկավար կենտրոն: Սա չի ընդունում Անթիլիասը հովանավորող կուսակցությունը, քանի որ շահ ունի այսպիսի իրավիճակից: Այսօր այս գործընթացն իրականացվում է Անթիլիասի ներկա գահակալ Արամ Ակի միջոցով, քաղաքական կուսակցության բնորոշ սկզբունքներով եւ մեթոդներով:

Հավանաբար ձգտելով ինքնահաստատման, Անթիլիասի գահակալն իր գործողություններով հիշեցնում է հայտնի խոսքը՝ պահվածքը նաեւ բնավորություն է: Քրիստոնեության ընդունման 1700ևամյակի առթիվ Արամ Ակի պահվածքը էջմիածնում եւ Երեւանում, նրա երեւալն ու անհետանալը նման էր խռոված հարսի պահվածքի: Հավատացյալ ժողովուրդը զարմանքով ու տարակուսանքով էր նայում նրա գոռոզ տեսքին: Ամեն ինչից երեւում էր, որ նա օժտված է նաեւ դերասանի վարպետության դասեր տալու գովելի շնորհքով: Իսկ այժմ նա նոր պատերազմ է սկսել Մայր աթոռ Սուրբ էջմիածնի դեմ: Մի ցավ էլ ունի Արամ Ակն, մի հիվանդ հավակնություն եւս: Տեսե՞ք... հանցա՞նք է կատարվում... «Կիլիկիո աթոռի գահակալը հավասար չի նկատված Ամենայն հայոց կաթողիկոսի կողքին»: Սպասե՛ք, բայց ինչո՞ւ Հայաստանյայց առաքելական եկեղեցու մի կառույց, որ մոտ 560 տարի արդեն պատմական անախրոնիզմ է դարձել, այսօր քաղաքական կուսակցության ճնշման միջոցով, առանց վախենալու Աստծո դատաստանից, փորձի իրեն հավասար տեսնել Հիսուս Քրիստոսի կամքով հիմնված 1700ևամյա Մայր աթոռ Սուրբ էջմիածնին: Ոչ մի կռվան հակառակը չի կարող ապացուցել: Կեղծ, շինծու կլինեն դրանք: Անտարակույս վտանգավոր խաղ է սա, որ մեզ՝ հայերիս ոչ մի լավ բան չի խոստանում: Չի բացառվում, որ այսպիսի մոտեցումներով ջուր է լցվում Եհովայի վկաների, մորմոնների, մասոնական օթյակների, օտարերկրյա գաղտնի ծառայությունների ջրաղացին, որոնք ամեն քայլի դիմում են՝ ձգտելով կործանել քրիստոնեությունն ընդհանրապես, Հայաստանյայց առաքելական եկեղեցին՝ առաջնահերթ: Այդ քաղցկեղի դեմ պայքարի պարտադիր պայման է ուժեղ, միասնական, ողջ Հայաստանյայց առաքելական եկեղեցու միակենտրոն, Մայր աթոռ Սուրբ էջմիածնի կատարյալ գաղափարը: Այս ամենի մասին մեկ անգամ չէ, որ ասվել է մամուլում՝ փորձելով համոզել, խնդրել, առաջարկել, համաձայնության գալ: Զո՞ւր հույսեր: Շրջահայացության ոչ մի նշույլ: Պատասխանը եղել է կամ դեմագոգիա, կամ հոխորտանք:

Ի՞նչ անել. Անթիլիասի անընդունելի մոտեցումների օրինակով առաջարկել Սուրբ էջմիածնին պառակտե՞լ սփյուռքի մեր եկեղեցու գրավված թեմերը՝ ստեղծելով նոր թեմեր, ասենք, Պարսկաստանում, որտեղ բոլոր առումներով հայրենիքին եւ Մայր աթոռին նվիրյալ ժողովուրդ է ապրում: Լավ, բայց այդ դեպքում ի՞նչ ասել Հարավային Ամերիկայի՝ Ուրուգվայի, Արգենտինայի, Բրազիլիայի թեմերի մասին, որ հազարավոր կիլոմետրեր հեռու լինելով Մայր աթոռից եւ հայրենիքից, սիրով եւ ջերմեռանդորեն նվիրված են Սուրբ էջմիածնին, ոչնչով չզիջելով Պարսկաստանի թեմերին: Կամ մի՞թե մեծագույն հարգանքի արժանի չէ Դամասկոսի թեմը՝ իր արժանապատիվ պահվածքով: Իհարկե, Մայր աթոռը չի գնա այդ թույլ դիմադրության ճանապարհով: Կա ավելի արժանապատիվ, ճիշտ ճանապարհ: Խոսքը վերաբերում է Մայր աթոռում հոգեւոր խորհրդի կողմից մշակվող կանոնական օրենսգրքին, որ հավանաբար շուտով կավարտվի եւ

Հայաստանյայց առաքելական եկեղեցին վերջապես կունենա իր հիմնարար օրենքները: Եթե Անթիլիասի գահակալ Արամ Ամն Հայաստանյայց առաքելական եկեղեցին համարում է «մեկ, միասնակա՛ն», նշանակում է մշակված եւ ընդունված օրենքներն աներկբա ընդունելի պետք է լինեն նաեւ Անթիլիասի համար: Հարկ է շեշտել, որ հայոց եկեղեցին բիզնես կենտրոն չէ, որ հաշվի առնվեն տարբեր երկրների, տարածաշրջանների զանազան փաստարկումները: Աստվածաբանական բոլոր կանոններով այն միաձույլ է: Ուստի եթե Անթիլիասը չընդունի նոր կանոնագիրքը, ապա դրանով Արամ Ամն իրեն դուրս կդնի Հայաստանյայց առաքելական եկեղեցու շրջագծից: Մենք դատապարտում ենք Անթիլիասի գահակալի վերոհիշյալ գործողությունները՝ ուղղված Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի դեմ: Մենք պնդում ենք, որ Արամ Ամն պետք է վերադարձնի Մայր աթոռից զավթած ԱՄՆի, Պարսկաստանի, Կանադայի, Հունաստանի թեմերը:

ՌՈՒԲԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ, Միջազգային ակադեմիայի ակադեմիկոս

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հարցազրույցը ռուսական հեռուստաընկերության «Զերկալո» ծրագրին

ԵՐԵՎԱՆ, 17 ՄԱՅԻՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հարցազրույց է տվել «Ռոսիա» հեռուստաընկերության «Զերկալո» ծրագրին: Ստորեւ ներկայացվում է հարցազրույցը:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Ոշրն էր ՌԴ նախագահի հետ Ձեր հանդիպման եւ բանակցությունների գլխավոր թեման եւ արդյունքը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Մեր հանդիպումները մշտապես կրում են նպատակաուղղված բնույթ: Մեր հանդիպման օրակարգը, որպես օրենք, լինում է մշակված, եւ մենք միշտ հասցնում ենք տեղավորվել օրակարգում: Ինչպես նախորդ հանդիպումները, այս մեկն էլ արդյունավետ էր: Քննարկվել է երկու հարց: Տնտեսական համագործակցության հարցը, որի մեծ բաժինը ռազմատեխնիկական գործակցությունն է: Տարածաշրջանի ու Հայաստանի իրադրությունը, միջազգային կազմակերպությունների հետ գործակցությունը: Հայաստանի եւ Ռուսաստանի համագործակցությունն այնքան ծավալուն է, որ մեր հանդիպումների միջեւ ընկած ընդմիջումից հետո օրակարգը լինում է բավական հագեցած: Ես բավարարված եմ այսօրվա մեր բանակցությունների արդյունքից եւ համոզված եմ, որ մենք ոչ միայն գտել ենք բոլոր դիրքորոշումների լուծումները, այլեւ դրանք կիրագործենք մոտ ապագայում:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Փաստորեն, հանդիպումը ոչ թե ձեւական էր, այլ ընդունվեցին հստակ որոշումներ:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ - Մենք վաղուց ենք սովորական հանդիպումներից անցել հստակ որոշումներ կայացնելուն: Եվ դա երկկողմ հարաբերությունների բոլոր ոլորտներում: Վերջին տարիներին տնտեսական բնագավառում մշակվել է ծավալուն ծրագիր: Մեր հանդիպումները գործնական բնույթի են:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Քննարկվեշլ են սուր քաղաքական հարցեր: Օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Անշուշտ քննարկվել է, քանի որ Ռուսաստանը ղարաբաղյան խնդրի կարգավորման միջնորդ է, եւ ես Ռուսաստանի նախագահին տեղեկացրի վերջերս Վարշավայում Ադրբեջանի նախագահի հետ կայացած հանդիպման մասին: Ռուսաստանի նախագահը բավական ծանոթ է խնդրին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման նրբություններին, հետեւաբար՝ եղել են հարցեր ու պարզաբանումներ: Սակայն, ընդհանուր առմամբ, այն տեղեկատվական բնույթի էր:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Մայիսի 12-ին, այսինքն Ղարաբաղում հրադադարի հաստատման տարեդարձի օրը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Նախիջեւանում հայտարարեց, որ Ադրբեջանը մտադիր է շարունակել Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ դիվանագիտական երկխոսությունը, սակայն եթե այն արդյունավետ չլինի, ապա կօգտագործվեն այլ միջոցներ: Ինչպիսին է Ձեր արձագանքը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Շատ հանգիստ: Այդպիսի հայտարարություններ տարբեր խմբագրությամբ մենք լսում ենք 1994 թվականի մայիսից, երբ ձեռք բերվեց հրադադարի համաձայնագիրը: Այդպիսի հայտարարություններ արել են Ադրբեջանի նախկին նախագահները, դրանք արվում են նաեւ այսօր, տարբեր ամբիոններից ու տարբեր առիթներով: Մենք դրանց հանգիստ ենք վերաբերվում: Մենք նույնպես պատրաստ ենք հարցը լուծել դիվանագիտական ճանապարհով, ակտիվորեն մասնակցում ենք բանակցային գործընթացին, սակայն, եթե մեր հարեւանը փորձի խնդիրը լուծել այլ ճանապարհով, ապա մենք պատրաստ ենք տալ համարժեք պատասխան:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Ինչպիսին են ձեր հարաբերությունները երիտասարդ Ալիեւի հետ:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Ես նրա հետ երկու անգամ եմ հանդիպել. Ժնեւում եւ Լեհաստանում: Պետք է ասեմ, որ այդ հանդիպումների տպավորությունը այնքան էլ համադրելի չէ Նախիջեւանում նախագահ Ալիեւի արած հայտարարությանը: Չնայած, այդպիսի հայտարարությունները պետք է դիտել մի քանի տեսանկյունից. հասարակական օգտագործման, արտաքին եւ ներքին նպատակներով: Հետեւաբար՝ մենք դրանց հանգիստ ենք վերաբերվում:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Ուզում եք ասել, որ Ալիեւից ստացած Ձեր տպավորությունը դրական է:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Այո: Համենայն դեպս, մեր վերջին հանդիպման ժամանակ, ես զգացի խնդրի կարգավորման հարցում նպատակաուղղվածություն եւ ցանկություն: Կարծում եմ, այդպիսի պատրաստակամություն ցուցաբերեցի եւ ես: Ես կարծում եմ, որ այդ ելույթում տեղ գտած ռազմատենչ ենթատեքստը չի կարող նպաստել կարգավորման խնդրին, քանի որ դրանք հարուցում են հակամարտության մյուս կողմերի նմանատիպ արձագանքները ոչ միայն Հայաստանում, այլեւ Լեռնային Ղարաբաղում: Հետեւաբար, մենք՝ որպես քաղաքագետներ, մեր երկրների ղեկավարներ, պետք է անենք այնպիսի հայտարարություններ, որ հետագայում չդառնանք դրանց պատանդը:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Ձեր գնահատականը հարեւան Վրաստանում ու հատկապես Աջարիայում կատարվող իրադարձությունների մասին: Նկատի ունեմ Վրաստանում «վարդերի հեղափոխությունը», Սահակաշվիլու իշխանության գալը, աջարական դեպքերը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Մեզ ցանկալի են Վրաստանում կայունության հաստատմանն ուղղված ցանկացած գործընթացներ: Հայաստանից Ռուսաստան ու Եվրոպա տանող ճանապարհներն անցնում են Վրաստանով: Եվ կայուն Վրաստանը էապես կնպաստի Ռուսաստանի հետ մեր տնտեսական հարաբերությունների զարգացմանը՝ տրանսպորտային հաղորդակցության տեսանկյունից: Վրաստանը գտնվում է մեր եւ Ռուսաստանի միջեւ, իսկ Ռուսաստանն ու Եվրոպան կարեւոր դեր են խաղում մեր տնտեսության զարգացման գործում: Կարծում եմ, դրության որոշակիացումը անպատճառ կունենա դրական արդյունք: Միջպետական երկկողմ հարաբերություններում ամենավատն անորոշությունն է եւ երկիմաստությունը:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Վերադառնանք Ռուսաստանի խնդիրների հանդեպ Ձեր վերաբերմունքին: Իշնչ կարծիքի եք Չեչնիայի իրադրության եւ վերջերս Գրոզնիում տեղի ունեցած ահաբեկչության մասին:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Ահաբեկչությունն իր բոլոր դրսեւորումներով ոչ միայն վտանգավոր է, այլեւ վերաբերում է բոլորին, եւ չեմ կարծում, որ դա միայն Ռուսաստանի խնդիրն է: Մենք միանշանակորեն մեր վերաբերմունքն ենք հայտնել ե՛ւ Չեչնիայի հակամարտության խնդրին, ե՛ւ Ռուսաստանի տարածքում կատարվող ահաբեկչական գործողություններին: Մենք Ռուսաստանի հետ դատապարտել ենք ահաբեկչությունն իր բոլոր դրսեւորումներով: Ես համոզված եմ, որ Ռուսաստանի հասարակությունն ու իշխանությունն ի վիճակի են դիմագրավել այդ մարտահրավերը: Բայց պետք է հաշվի առնել այն փաստը, որ դա արագ լուծվող խնդիր չէ, եւ հավանաբար անհրաժեշտ է օգտագործել համաշխարհային փորձը: Բայց մենք, անկասկած, Ռուսաստանի հետ ենք:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Դուք այդ հարցը քննարկեշլ եք Պուտինի հետ:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Այս անգամ այդ հարցը մենք չենք քննարկել:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Ինչ կասեք Ռուսաստանի եւ ռուսների հանդեպ Հայաստանի եւ հայերի վերաբերմունքի մասին:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Հարցն անսպասելի է, բայց համեմատաբար հեշտ է պատասխանել: Ես չեմ հիշում ռուսների նկատմամբ հայերի բացասական վերաբերմունքի որեւէ դեպք: Նույնիսկ մեր գրականության մեջ գրեթե չկա բացասական ռուս հերոս: Եվ այդպիսին է մեր պատմությունը: Ես կարծում եմ, հարաբերությունների այդ որակը ձեւավորել են մի քանի սերունդներ՝ ե՛ւ Ռուսաստանում, ե՛ւ Հայաստանում: Եվ դա է այն արժեքների հիմքը, որի վրա կառուցվում են մեր այսօրվա հարաբերությունները: Եվ որ ամենակարեւորն է՝ մենք միմյանց համար գլխացավանք չենք ստեղծում: Իսկական ընկերները պետք է աշխատեն խնդիրներ չստեղծել միմյանց համար: Այդ տեսանկյունից մեր հարաբերությունները շատ անկեղծ են՝ ե՛ւ նախագահների միջեւ, ե՛ւ միջպետական ու կենցաղային մակարդակներում:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Այժմ անդրադառնանք ձեր ներքին խնդիրներին, ընդդիմության ակտվացմանը: Ինչով է դա պայմանավորված, եւ ինչպես կբնորոշեիք Ձեզ հակադրվող քաղաքագետների դիրքորոշումը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Դա տեղի ունեցավ Վրաստանի թավշյա հեղափոխությունից հետո, չնայած իմ կարծիքով, ուրիշի հեղափոխությամբ ոգեւորվելը երբեք լավ բանի չի հանգեցրել: Պատմությունը սովորեցնում է, որ պետք է դասեր քաղել սեփական սխալներից: Բայց դա մեր ընդդիմությունն է՝ ինչպիսին էլ այն լինի: Իր ագրեսիվ, չմտածված քայլերով այն հայտնվել է փակուղում, որից եւ դժվարանում է դուրս գալ: Այն այսօր տառապում է «ուրիշի խրախճանքի խումհարից»: Ցանկանում է, որ նույնը կատարվի նաեւ հայկական իրականության մեջ: Ինչեւէ, մենք ձեռք ենք մեկնում ընդդիմությանը: Կոալիցիոն կառավարությունը երկխոսություն է առաջարկում, չնայած կարող էր եւ չանել, որովհետեւ ընդդիմության պահանջներն անօրինական են: Սակայն, մենք փորձում ենք նրանց դուրս բերել այս վիճակից, քանի որ, իմ համոզմամբ, առանց նորմալ ընդդիմության, ոչ մի կառավարություն կամ խորհրդարան ի վիճակի չէ արդյունավետ աշխատել:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Ինչ եք կարծում, իրադրությունը կմնա զուտ քաղաքական շրջանակներոշւմ, թե դուրս կգա դրա սահմաններից:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Մի փորձ եղավ այն դուրս բերել փողոցային հարաբերությունների մակարդակի, բայց իշխանությունը ցույց տվեց, որ ի վիճակի է դա կարգավորել: Զարգացող կամ անցումային փուլում գտնվող երկրներում ժողովրդավարությունը կարող է երկկողմանի վտանգների ենթարկվել: Մի կողմից՝ իշխանության չափազանց ավտորիտարությունը, մյուս կողմից՝ քաղաքական փոքրամասնության ագրեսիվությունը: Երկրորդը պակաս վտանգավոր չէ, քանի որ անկարգություններից տուժում են բոլորը: Եւ Հայաստանի իշխանությունը ցույց տվեց, որ ի վիճակի է դիմակայել այդ մարտահրավերին: Առաջին հերթին մենք պաշտպանեցինք ժողովրդավարությունը եւ այն արժեքները, որոնք մենք ձեռք ենք բերել վերջին տարիներին:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Դուք Ձեզ համարում եք ավտորիտաշր, թե ժողովրդավարական հակումներով գործիչ:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Հայաստանի Սահմանադրությունը նախագահին տալիս է որոշակի իրավունքներ, եւ ես երբեք չեմ խախտել այդ իրավունքների սահմանները: Սահմանադրությունը նախագահին տալիս է իրավունքներ, որպեսզի նա իրականացնի իր իշխանությունը եւ կրի պատասխանատվություն երկրի համար: Ինձ համար դժվար է ինձ բնութագրելը, բայց կարծում եմ, ես ավելի շուտ ղեկավար եմ, որը հակված է երկրում խորացնել ժողովրդավարությունը: Եւ ես հակված եմ դա անել:

ՆԻԿՈԼԱՅ ՍՎԱՆԻՁԵ- Իշնչ լեզվով եք Դուք մտածում:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ- Սկզբում ռուսերեն, քանի որ

ռուսական կրթություն ունեմ, բայց ավելի ուշ՝ արդեն հայերեն:

Մշակութային

Վարդան Այգեկցի

36.Գայլագռաւն ու աղուէսը

Գայլագռաւը մահու չափ սոված էր: Նա գնաց գողացաւ հողագործից մի կտոր պանիր եւ գալով նստեց մի բարձր պատի վրայ. որ ուտի: Պատի տակ կար մի աղուէս, որը տեսնելով ագռաւին՝ պանիրը բերանը, սկսեց գովել նրան ու ասել.

-Փառք քեզ, Աստուած, որոտեղի՞ց յայտնուեց այս պայծառ արեգակը, որ գեղեցիկ է եւ նման լուսնին, անձով սուրբ է, իսկ փետուրները փայլում են արեւի նման: Եթէ ձայնն էլ հզոր լիներ, տիեզրքի վրայ ես նրան թագաւոր կը կարգէի:

Ագռաւը խելքը գնաց, հպարտացաւ նա սուտ գովսից, մոռացաւ պանիրը ու ասաց մտքում. «Այսպէս գեղեցիկ եմ ես, ու ձայնս էլ հզոր է»: Եւ տարածելով իր թեւերը, ագռաւը բարձր ձայնեց: Պանիրը պոկուեց նրա բերանից, ընկաւ աղուէսի առջեւ:

-Այո՛, ձայնդ լաւ է,- ասաց աղուէսը ագռաւին,- բայց խելք բոլորովին չունես: Դու մի շերտ պանիր չկարողացար պահել, ինչպէս պիտի պահես թագաւորութիւնը:

37.Աղուէսն ու խեցգետինը

Աղուէսն ու խեցգէտինը բարեկամացան, միասին ցանեցին եւ հնձեցին արտերը, կալսեցին ու շեղջեցին ցորենը:

-Ելնենք բլրի կատարը եւ վազելով գնաք,-առաջկեց աղուէսը,- ով շուտ հասնի՝ կալը, ցորենը նրան լինեն:

Երբ ելան բլուրը, խեցգետինն ասաց աղուէսին.

-Խնդրում եմ, երբ վազել ուզենաս, պռչովդ հարւածիր ինձ, որ իմանամ ու գամ քեզ հետ:

Երբ խեցգետինը բացեց իր մկրատը: Աղուէսը իր պոչով խփեց ու վազեց, իսկ խեցգետունը, փակելով մկրատը, կպաւ նրա պոչին: Երբ աղուէսը հասաւ ցորենի շեղջին, ետ շրջուեց տեսնելու, թէ որտեղ է խեցգետինը: Իսկ խեցգետինը ընկնելով շերջի վրայ, ասաց.

-Հանուն Աստծու, այս ամենը իմն է:

Աղուէսը զարմացաւ.

-Ով դու չար, ե՞րբ հասար այստեղ:

38.Վարազն ու աղուէսը

Վարազը մեծ ջանք ու եռանդով սրում էր իր ատամները: Գալիս է աղուէսն ու հարցնում.

-Այդ ի՞նչ ես անում, չէ որ հիմա կռւի ու պատերազմի վտանգ չկայ:

-Լռի՛ր, գարշելի աղուէ՛ս,- պատասխանում է նրան վարազը,- դու ի՞նչ ես հասկանում պատերազմից: Այն ժամ պէտք է սրել, երբ պարապ ես:

39.Աքաղաղը, աղուէսը ու շունը

Աքաղաղը թռել էր մի ծառի վրայ քնելու: Գիշերւայ կէսին նա կանչում է բարձր ձայնով: Աղուէսը լսում է նրա կանչը եւ, մօտ գալով ասում.

-Տէր հայր, այսօր սուրբ Կարապետի տոնն է եւ քարոզիչ չունենք, որ կատարենք տոնը: Ծառից իջիր, միասին տոնենք:

-Մի քիչ համբերերիր,- ասում է աքաղաղը,- մինչեւ քեռիս գայ, որ հանդիսաւոր տոն անենք:

Լոյսը բացւելուն պէս, հանկարծակի գալիս է մի քերծեւ ու բռնում աղուէսի կոկորդից: Աղուէսը սկսում է ահաճ ձայնով գոռալ:

-Վա՜յ ինձ,- ասում է աքաղաղը,- այդպիսի գարշելի ձայնո՞վ պիտի կատարէիր մեծ Կարապետի տոնը:

40.Աւանակի մեծարումը

Էշին պատւի արժանացրին եւ հրիաւիրեցին թագաւորի որդու հարսանիքին:

- Վա՜յ ինձ,- ասում է էշը,- ես ոչ շեփորահար եմ եւ ոչ պարորդ, գիտեմ, որ հարսանիքին ինձ վիճակւած է ծանր բեռ կամ ջուր կրել:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

-Լավ ձին գարին կավելացնի, վատ ձին՝ մտրակը:

-Լավ մսի կտոր է, բայց ի՞նչ անեմ, շան բերանն է:

-Լավ է կանգնած մեռնել քան ծնկաչոք ապրել:

-Լավ է աչքով կույր լինել, քան մտքով:

-Լավ է մարդու աչքը դուրս գա, քան անունը:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

-Պապիդ կհասկանաս, երբ պապ դառնաս:

-Պատերի մեջ մկներ կան, մկներն էլ ականջներ ունեն:

-Պատվով մեռնելն, անպատիվ ապրելու լավ է:

-Պղինձը պղնձին ասում է՝ տակդ մրոտ է:

-Պտուղը կերար, ճյուղը մի' կտրի:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

Հարցաքննութեան բերած գողին դատաքննիչը հարցնում է.

- Դու այս դանակը տեսե՞լ եմ:

- Ոչ,- պատասխանում է յանցագործը:

- Ուրեմն հրաժարւում ես: Սրան նորից մենախուց տարէք:

Մի շաբաթ յետոյ քննիչը կարգադրում է իր մօտ բերել նոյն յանցագործին: Քննիչը նորից ցոյց է տալիս դանակը եւ նորից հարցնում.

- Տեսե՞լ ես այս դանակը:

- Այո, պարոն քննիչ:

- Վերջապէ՜ս, փառք աստծոյ, դու սկսում ես խոստովանել յանցանքդ: Ուրեմն որտե՞ղ ես տեսել այս դանակը:

- Անցեալ շաբաթ դուք ինքներդ ինձ ցոյց տուեցիք, պարոն քննիչ:

2- Արդյոք գիտե՞ք

Սառած մսից խորհուրդ է տրւում կտրել միայն այնքան, որքան անհրաժեշտ է կերակրի համար: Մի անգամ ետ եկած նորից սառեցրած միսը դառնում է ամուր, չոր եւ կորցնում է սննդարարութիւնը:

***

Կերակուր պատրաստելուց շատ առաջ միսը չի կարելի աղ անել, մսահիւթը կառաջանայ անժամանակ, համաը կը վատանա եւ կը կոչի սննդարարութիւնը:

***

Եթէ աղացած մսին աւելացնենք մի քիչ քերած կարտոֆիլ կամ թթւասեր, իսկ մասնահատման ժամանակ իւրաքանչիւր մէջտեղում դնենք կտոր իւղ, կոտլետները կը լինեն փափուկ, փարթամ եւ հիւթալի:

3.ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1-
Ո՞վ է, որ մեզ նվիրում է
Այն ամենն, ինչ երեւում է:
2-
Հանդ է գնում տախտակի պես,
Տուն է գալիս տակառի պես:
3-
Պահակ չէ, բայց անընդհատ
Բոստանին է աչք ածում:
Ծերուկ էլ չէ, բայց նրա
Մորուքից են ակնածում::
4-
Ոչ մանում է,
Ոչ գործում է,
Բայց բոլորիս հագցնում է:
5-
Սարը նստել է սարին,
Երկու սարը մի սարին,
Թոկով նրանց կապեցի
Ու մեր հանդից դուրս արի:

Պատասխան.1-Լույս 2- Կով 3- Այծ 4- Ոչխար 5- Ուղտ

Առողջապահական

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

Նվազ դաշտանի ժամանակ խորհուրդ է տրվում օգտագործել սպանդի տերեւներ: Եռացնել կես բաժակ ջուր եւ կրակը մեղմացնել այնքան, որ ջուրը գրեթե դադարի եռալուց: Այնուհետեւ ջրի մեջ լցնել 4ՕՕ գրամ սպանդի տերեւներ եւ 15 րոպե եփել, առանց ջուրը եռացնելու: Որից հետո սառեցնել եւ առավոտյան ընդունել ամբողջ դեղաբաժինը՝ քաղցած վիճակում: Դեղն ընդունելուց հետո 5-6 ժամ ոչինչ չուտել: Վերոհիշյալ բուժամիջոցը կիրառել մեկ անգամ:

* * *

Քթի արնահոսությունը դադարեցնելու համար դեռեւս 15-րդ դարում ընդունված է եղել օգտագործել հազարատերեւուկի եփուկն ու հյութը: Ավելի ուշ, այս դեղամիջոցը օգտագործվել է ներքին՝ մասնավորապես արգանդային արնահոսությունը դադարեցնելու համար:

* * *

Առատ դաշտանի ժամանակ 1 կգ գլուխ սոխի կճեպները լցնել 2 բաժակ եռացող ջրի մեջ եւ 15-20 րոպե եփել հանդարտ կրակի վրա: Որից հետո սառեցնել, քամել եւ առավոտյան քաղցած վիճակում խմել կես բաժակ: Այս բուժգործողությունը կատարել 2 օր:

* * *

Հետծննդյան արտադրությունը նվազեցնելու համար խորհուրդ է տրվում օգտագործել կեչու տերեւների եփուկ: 10 գ չոր ու ծեծված կեչու տերեւները եփել 1 բաժակ եռացող ջրում եւ ընդունել օրը 1 անգամ:

* * *

Ցնցուղատապի (բրոնխիտի) բուժման համար՝ արծնապատ կաթսայի մեջ լցնել 1 բաժակ կաթ եւ 1 ճաշի գդալ եղեսպակ (շալֆեյ): Կաթսան որեւէ սկուտեղով կամ ափսեով ծածկելուց հետո, այդ խառնուրդը եռացնել մարմանդ կրակի վրա եւ փոքր-ինչ սառեցնելուց հետո, քամել: Նորից եռացնել եւ տաք վիճակում խմել՝ քնելուց առաջ: